«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«30» 07 2014թ.

Հաստատում եմ
Գնումների աջակցման կենտրոնի
պետի ժամանակավոր պաշտոնակատար
Հ. Թունյան

Ն ԳԲԽ 27/14 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից 07.07.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ նաև Կենտրոն) 07.07.2014թ. ներկայացված բողոքով «Էլդոգար» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն)

հայտնել է, որ մասնակցել է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից էլեկտրոնային եղանակով հայտարարված «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՇՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգին՝ 2-րդ չափաբաժնի մասով:

Ընկերության կողմից 09.06.2014թ. ժամը 18:18-ին ստացված հայտերի գնահատման մասին արձանագրության համաձայն ընտրված մասնակից է ճանաչվել «Արա Արաքս Գրուպ» ՍՊԸ-ն: Նույն օրը՝ 09.06.2014թ., Ընկերությունը իր պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ eldogare@bk.ru, ստացել է թիվ ԱԱ/13/3421-14 գրությունը, որի համաձայն Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից: Նույն գրությամբ Ընկերությունից պահանջվել է gnumnercadastre@mail.ru հասցեին ներկայացնել բաց ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշերին Ընկերության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը: 11.06.2014թ. Ընկերության կողմից gnumnercadastre@mail.ru էլեկտրոնային հասցեին են ուղարկվել «Էլդոգար» ՍՊԸ-ի որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը: Ընկերությունը ներկայացրած բողոքին կից տրամադրել է նաև էլեկտրոնային փոստի քաղվածք, որը հավաստում է համապատասխան փաստաթղթերը ուղարկված լինելու փաստը:

Ընկերությունը հայտնել է, որ իր էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկված նամակների չստացման վերաբերյալ էլեկտրոնային փոստի օպերատորի կողմից ծանուցում չի ստացել՝ ինչը էլեկտրոնային փոստի օպերատորների կողմից սպասարկվող փոստերի համար պարտադիր ծառայություն է: Չնայած այս հանգամանքին՝ Ընկերության տնօրենը նույն օրը, հեռախոսակապի միջոցով գրության մեջ նշված 010-54-42-85 հեռախոսահամարով, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակցից ճշտել է ուղարկված փաստաթղթերը պատվիրատուի կողմից ստացված լինելու փաստը: Վերոհիշյալ հեռախոսազանգը կատարված լինելու փաստը հավաստվել է ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության կողմից 17.07.2014թ. տրամադրված Ընկերության տնօրենին պատկանող հեռախոսահամարից՝ 01.06.2014թ.-30.06.2014թ. կատարված ելքային զանգերի քաղվածքով:

Որակավորման փաստաթղթերը ուղարկելուց հետո Ընկերությունը չի ստացել «Էլդոգար» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին ծանուցում: Այնուհետև, Ընկերությունը www.gnumner.am կայքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունների բաժնում հայտանաբերել է հայտարարություն՝ հաստատված

30.06.2014թ. գնահատող հանձնաժողովի թիվ 2 որոշմամբ, որից պարզ է դարձել, որ Ընկերությունը չի ներկայացրել իր որակավորումը հավաստող փաստաթղթերը և վերջինիս կողմից ներկայացված հայտը մերժվել է, ինչի մասին Ընկերությունը նույնիսկ չի տեղեկացվել:

Ընկերության պնդմամբ գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքը քննող հանձնաժողովին «Էլդոգար» ՍՊԸ-ն խնդրել է 2-րդ չափաբաժնի մասով դադարեցնել «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՇՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովի կողմից «Էլդոգար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2. ՀՀ կառավարությանն անոընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 08.07.2014թ. N 05/032-1196 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 07.07.2014թ. «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն 16.07.2014թ. N ԳԵ/13/4544-14 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՇՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգի շրջանակներում ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընտրված մասնակցի՝ «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից gnumnercadastre@mail.ru էլեկտրոնային փոստին ուղարկված՝ բաց ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցի որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը տեխնիկական խնդիրների պատճառով չեն պահպանվել և տեղի ունեցած սխալի հետևանքով «Էլդոգար» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու ծանուցում չի ուղարկվել:

3. ԳԲԽ-27/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-27/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումները.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Էլդոգար» ՍՊԸ-ի 07.07.2014թ. ներկայացրած բողոքը, գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 19.05.2014թ. N 2, 27.05.2014թ. N 3, 06.06.2014թ. N 4, 23.06.2014թ. N 5 և 30.06.2014թ. N 6 արձանագրությունները, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին ներկայացրած 16.07.2014թ. N ԳԵ/13/4544-14 գրությունը, հայտում է հետևյալը.

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանման վարչական շենքի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՇՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Գնահատող հանձնաժողովի 06.06.2014թ. N 4 արձանագրության 1-ին կետի 1.5 ենթակետի համաձայն՝ որոշում է կայացվել ներկայացված գնային առաջարկների հիման վրա 2-րդ չափաբաժնի մասով 4-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Էլդոգար» ՍՊԸ-ին, ծանուցել մասնակցի որակավորումը հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու մասին:

Հանձնաժողովի 23.06.2014թ. N 5 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով ներկայացրած գնային առաջարկների հիման վրա 4-րդ տեղը զբաղեցրած մասնակիցը՝ «Էլդոգար» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել մասնակցի որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

«Էլդոգար» ՍՊԸ-ն 07.07.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ 09.06.2014թ., Ընկերությունը իր պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ eldogare@bk.ru, ստացել է թիվ ԱԱ/13/3421-14 գրությունը, որի համաձայն ճանաչվել է ընտրված մասնակից: Նույն գրությամբ Ընկերությունից պահանջվել է gnumnercadastre@mail.ru էլեկտրոնային հասցեին ներկայացնել բաց ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշերին Ընկերության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը: Ընկերության կողմից 11.06.2014թ. gnumnercadastre@mail.ru էլեկտրոնային հասցեին են ուղարկվել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Միաժամանակ, Ընկերությունը հայտնել է,

որ իր էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկված նամակների չստացման վերաբերյալ էլեկտրոնային փոստի օպերատորի ծանուցում չի ստացել՝ ինչը էլեկտրոնային փոստի օպերատորների կողմից սպասարկվող փոստերի համար պարտադիր ծառայություն է:

Նույն օրը Ընկերության տնօրենը հեռախոսակապի միջոցով գրության մեջ նշված 010-54-42-85 հեռախոսահամարով՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակցից ճշտել է ուղարկված փաստաթղթերը պատվիրատուի կողմից ստացված լինելու փաստը:

Այնուամենայնիվ, որակավորման փաստաթղթերը ուղարկելուց հետո Ընկերությունը չի ստացել «Էլդոգար» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին ծանուցում: Ավելին, Ընկերության կողմից www.gnumner.am կայքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունների բաժնում հայտանաբերվել է հայտարարություն՝ հաստատված 30.06.2014թ. գնահատող հանձնաժողովի թիվ 2 որոշմամբ, որից պարզ է դարձել, որ Ընկերությունը չի ներկայացրել իր որակավորումը հավաստող փաստաթղթերը և վերջինիս կողմից ներկայացված հայտը մերժվել է, ինչի մասին Ընկերությունը նույնիսկ չի տեղեկացվել:

«Էլդոգար» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընկերությունը բողոքը քննող հանձնաժողովին խնդրել է 2-րդ չափաբաժնի մասով դադարեցնել «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՇՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովի կողմից «Էլդոգար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Պատվիրատուն 16.07.2014թ. Կենտրոնին ներկայացրած N ԳԵ/13/4544-14 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՇՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգի շրջանակներում ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընտրված մասնակցի՝ «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից gnumnercadastre@mail.ru էլեկտրոնային փոստին ուղարկված բաց ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցի որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը

տեխնիկական խնդիրների պատճառով չեն պահպանվել և տեղի ունեցած սխալի հետևանքով «Էլդոգար» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու ծանուցում չի ուղարկվել:

Կենտրոնում 21.07.2014թ. ժամը 16:00-ին կայացած բողոքը քննող հանձնաժողովի նիստի ընթացքում Ընկերության ներկայացուցիչը ամբողջությամբ պնդեց իր կողմից ներկայացված կարծիքը:

Բողոքը քննող հանձնաժողովի այն հարցին, թե արդյոք Պատվիրատուի ներկայացուցիչը ունի առարկություններ, վերջինս պատասխանեց, որ, ըստ էության, չի հերքում Ընկերության կողմից անհրաժեշտ փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ուղարկված լինելու փաստը, սակայն նշեց, որ տեխնիկական խնդիրների պատճառով Պատվիրատուի կողմից նշված փաստաթղթերը չեն պահպանվել և տեղի ունեցած սխալի հետևանքով «Էլդոգար» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու ծանուցում չի ուղարկվել:

Կենտրոնի նախաձեռնությամբ 23.07.2014թ. ժամը 14:00-ին կազմակերպված քննարկման ընթացքում, Պատվիրատուի ներկայացուցչի ներկայությամբ, «Էլդոգար» ՍՊԸ-ի ներկայացուցիչը բացեց իր էլեկտրոնային փոստը և ցույց տվեց Պատվիրատուի կողմից էլեկտրոնային եղանակով ուղարկված նամակին ի պատասխան Ընկերության կողմից 11.06.2014թ. ժամը 14:45-ին և 14:49-ին ուղարկված նամակները և դրանց կից ներկայացված որակավորման պահանջներին Ընկերության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Կենտրոնի այն հարցին, թե արդյոք Պատվիրատուի ներկայացուցիչը հավաստիացավ, որ Ընկերության կողմից պահանջվող որակավորման փաստաթղթերը պատշաճ կերպով ներկայացվել են, Պատվիրատուի ներկայացուցիչը ընդունեց, որ Ընկերությունը կատարել է իր պարտավորությունը՝ պահանջվող բոլոր փաստաթղթերը Պատվիրատուին ուղարկելով: Միաժամանակ, Պատվիրատուի ներկայացուցիչը հավելեց, որ ամենայն հավանականությամբ, Պատվիրատուի մոտ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը չեն պահպանվել տեխնիկական սխալի պատճառով:

Կենտրոնի հարցին, թե ներկայումս կա արդյոք նշված «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՇՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիր, Պատվիրատուի ներկայացուցիչը պատասխանեց, որ 05.07.2014թ. հրապարակվել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, սակայն պայմանագիրը դեռևս չի կնքվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 05.12.2013թ. N 1370-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)՝

- 26-րդ կետի համաձայն՝ բաց ընթացակարգի կիրառման դեպքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ գնահատող հայտերի գնահատման արդյունքների հաստատման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է՝ վերջինիս որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին:

- 27-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պահանջվող փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուղարկում է հրավերում նշված պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին: Պատվիրատուն պարտավոր է մասնակցի որակավորման փաստաթղթերն ստանալու օրը հաստատել փաստաթղթերն ստանալը՝ հրավերում նշված իր պաշտոնական էլեկտրոնային փոստից մասնակցի էլկեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով: Մասնակիցը նույն կետով նախատեսված՝ պատվիրատուի հավաստումը չստանալու դեպքում կրկին հրավերում նշված պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին ուղարկում է պահանջվող փաստաթղթերը:

Այսպիսով, թեև Կարգի 27-րդ կետի համաձայն պատվիրատուն պարտավոր էր մասնակցի որակավորման փաստաթղթերն ստանալու օրը հաստատել փաստաթղթերն ստանալը՝ հրավերում նշված իր պաշտոնական էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով, սակայն Պատվիրատուն հավաստումը չի ուղարկել: Հավաստում չստանալով Ընկերությունը կապ է հաստատել Պատվիրատուի հետ և տեղեկացել, որ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակցի կողմից Ընկերության ուղարկած փաստաթղթերը այնուամենայնիվ ստացվել են:

Գտնում ենք, որ Ընկերությունը պատշաճ կերպով կատարել է գնման գործընթացի շրջանակներում իր կողմից ստանձնած պարտավորությունը և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Պատվիրատուին է ներկայացրել որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետն՝ առաջարկում ենք «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից 07.07.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել՝ ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով դադարեցնել «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՇՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովի 23.06.2014թ. կայացած նիստի N 5 արձանագրության 1-ին կետով «Էլդոգար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Պետի տեղակալ՝		Հ. Այունց
Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝		Հ. Ենգոյան
Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-27/14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար		Լ. Եղիազարյան